ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 01 >> հուլիսի 2013թ. N 43 - Ա

ք. Արմավիր

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ, 164-րդ և 169-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N 1558-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի փետրվարի 1-ի N 17-Ա հրամանով հաստատված հավելվածը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Դավիթ Դավթյանին տրամադրել 2013 թվականի իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները՝ 2013 թվականի հուլիսի 9-ից օգոստոսի 8-ը ներառյալ՝ 24 աշխատանքային (20 նվազագույն, 4 լրացուցիչ) օր տևողությամբ:
2. Դավիթ Դավթյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում քարտուղարության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ Մարիամ Առուշանյանին:
3. Դավիթ Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2013 թվականի օգոստոսի 9-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ